## ՆԵՐԼԱՑ ՀՌՈՄԱՔԱՂՔԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՑՈՒՑԱԿԸ

(Շարունակութիւն․)

### 4.

### ՇԱՐԱԿՆՈՑ

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱՆ Դ․ ԹԻՒ Է․ — ՏԱՐԻ ?

*ՄԵԾՈՒԹԻՒՆ 32×20.5: — ԹՈՒՂԹ 211, էջք 419: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն 23×12: — ՏՈՂՔ՝ մինչեւ էջ 379, 24-284էն՝ 30: — ՆԻՒԹ՝ թուղթ հին: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ըստ բաւականի մաքուր պահուած, բայց շատ տեղ պատռտած ու կպցուած. եւ էջերուն մէջէն մէյ մէկ կտոր կտրուած: — ԿԱԶՄ՝ Կաշեկազմ. բայց խեղճ վիճակի մէջ. 379էն մինչեւ 384 կը պակսի երկու թուղթ: — ԳԻՐ՝ նոտր գիր. այլեւայլ ձեռքէ ելած: Մինչեւ էջ 167՝ մէկ տեսակ գիր 168էն մինչեւ 239 ուրիշ տեսակ. ասկից անդին՝ մինչեւ 379՝ ուրիշ. — Իսկ 384էն բոլորովին տարբեր, նորագոյն՝ օտար, անվարժ ձեռք ու գրիչ գրած է: — ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ «Քաղուածք օրհնութեանց տօնից հռչակագունից»: — Սկիզբն ու վերջը դատարկ թուղթ մը: — ԼՈՒՍԱՆՑՔԻՆ վրայ նշանակուած են շարականաց ձայները. դարձեալ՝ տօներուն, կիրակիներուն, սրբոց ու պահոց անունները: — ՎԵՐՆԱԳԻՐՔ ու ՍԿԶԲՆԱԳԻՐՔ կարմիր են: Տեղ տեղ կը գտնուին նաեւ զարդագրեր: — Մինչեւ 137 էջ. տօներուն առաջին տողը կարմիր՝ երկրորդը՝ կանանչ է: Բայց ասկից ետքը՝ մինչեւ մատենին վերջը՝ միայն կարմիր ու սեւ: Կը պակսի գրքին սկիզբը՝ մինչեւ էջ 24: — ՅԻՇԱՏԱԿ ու տեղեկութիւն չկայ: — ԳՐՈՒԹԵԱՆ ժամանակ ու գրիչ եւ ստացող՝ անյայտ: Կարելի է ընել գրութիւնը ԺԶ-ԺԸ. դարուն:*

### 5.

### ԳԱԹԵԽԻԶՄ ՀՌՈՄԷԱԿԱՆ

#### ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՐԱՆ Դ․ — ԹԻՒ Ը․ ՌՈՂԷ․ 1697․

*ՄԵԾՈՒԹԻՒՆ 30×19: — ԳՐՈՒԹԻՒՆ միասիւն 26×13: — ԹՈՒՂԹ 236, էջ 440 — ու 1-36: Ասկից ետքը 5 թուղթ անգիր: — Նորէն էջ 1-440 ու դարձեալ 1—19. վերջէն երկու թուղթ պակաս: — ԿԱԶՄ՝ հին. կաշեկազմ տեղիս տեղիս ցեցակեր: — ՍՏԱՑՈՂ «Ի գրեանց բազմաշխատ Տեառն Յոհաննու Մխիթարեան Էրզրումեցւոյ վարդապետի եւ առաքելական Միսիոնարի: — ՆԻՒԹ՝ ակոսաթուղթ. պինդ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ բոլորովին լաւ ու աղէկ պահուած: — ԳԻՐ՝ մաքուր շղագիր: — ԼՈՒՍԱՆՑՔՆԵՐԸ խիտ առ խիտ լեցուած Աստուածաշունչէն՝ մարմնոյն մէջ յառաջ բերուած խօսքերուն վկայութիւններովը: — Դատարկ են 24 էջէն ետեւ 4 թուղթ: — Ճակտէն յառաջ եղած պարապ թղթին վրայ այսպէս գրուած է. «Ի գրեանց Տ. Յոհաննու Մխիթարայ Յովհաննեան 1730»: — Վերջին պարապ թղթին ստորեւը. «Յամի Տեառն 1732 եկի ի յԱլխցխայ եւ սկսայ քարոզել. Յունուարի 3 մտի ի նոյն քաղաք»:*

**Մ**ատեանս է գաթեխիզմ Հռոմէական, այս է վարդապետումն իրաց սրբազանից ըստ վճռոց Սրբազնասուրբ ժողովոյն Թրիտենդինոյ, հրամանաւ փիոսի Ե․ երորդի քահանայապետին ծայրագունի, տպագրեցեալ յամի Տեառն Ռ․Շ․Կ․Զ․ յետ այնորիկ ի գլուխս եւ ի խնդիրս բաժանեցեալ։ Իսկ եւ լանազանից սրբոց հարց զգածմամբք եւ իւրաքանչիւրոյ թէ նորոյ եւ թէ հնոյ կտակի հեղինակութեամբ ի լուսանցսն փաղանշանեցեալ։ Որում եւս ցուցանք երկու վերայ յաւելեցեալք. մին այնց իրաց, որ ի բոլորում գրքի անդ պարունակին։ Միւսն այնց Որ առ Աւետարանս Կիւրակէից եւ առ տօնս ոմանս պատկանիլ կարեն. վասն դիտաւորութեան հոգաբարձուաց քահանայից։ Թարգմանեցեալ ի հայկական բարբառ, յամի Տեառն Ռ․Ո․Ղ․Է․ի Լէոպօլիս ի փառս մեծագոյնս Աստուծոյ։

Կու գայ նախ (էջ 1․) «Ցուցակ գլխոց եւ խնդրոց բոլորի գրոցս։ Մասն Առաջին․ Առաջաբանութիւն, որ ընձեռէ յաղագս հաւատոյ յեկեղեցւոյ հիմնութիւն, հեղինակութիւն, պաշտաման, եւ մանաւանդագականաց վարդապետութիւն քրիստոնէականի գլխոց. բաժանեալ ի խնդիրս ժգ․ի թղթին 1 եւ ի հետագայս ի թղ. 90. — Մասն երկրորդ. յաղագ․ խորհրդոց եկեղեցւոյ (97—245)։ — Մասն երրորդ. յաղագս տասնաբանեայ եւ ածայնոց օրինաց (էջ 258—341)։ — Մասն Չորրորդ․ յաղագս աղօթից եւ նորին հարկաւորութիւն (էջ 350—436)․»

Կը յաջորդէ (էջ 4)․ «Միւս ցուցակ յաճախաբան խորհրդոց առաջաբանութիւն գաթեխիզմի Հռոմէականի բացատրելոց։ — Ցուցակ յաճախաբան գլխոց եւ խնդրոց Առաջնոյ մասին գաթեխիզմին հռոմէականի (էջ 6—31)։ Աւարտ։

Վերոյիշեալ ճակատէն ետեւ կու գայ բուն գրքին բովանդակութիւնն (էջ 3)․ որ կը սկսի այսպէս «Փիոսի Ե․ որդի, քահանայապետին ծայրագունի հրովարտակ․» — Ասոր կը յաջորդէ թուղթ մը, որ կը պարունակէ այս յիշատակարանը։

«Գերյարգելեաց Հարց եւ պատուելեաց եղբարց ի Քն գղեաց Արամայնեաց, զՈղջոյն բազում տամ։

«Սրբազնաբարոյ ժողովոյն Թրիտենդինոյ Հարցն զներանձութիւնս համայնս իմաստնաբար եւ ծանու ենթադրութիւն եւ ընտրողութիւն գոլ ընձեռեցին ոչ առմեք ոչ են անհնարաւորք ընդ բոլոր Եւրոպիոյ։ Որք եւ ի նոյնում մեծի ժողովոյ յետ Աճայրականաց այլոց Գործոց մեծախորհրդաբար խոհեմութիւն նկատեցին այնր ժամու, զհարկաւորութիւն Կաթուղիկէի եկեղեցւոյ, ոչ նուազ բարեպաշտապէս, քան անհնարինաստնաբար եւ փրկաւէտօրէն աւանդարեցին ի վճիռս իւրեանց յօրինել զԳիրս զայս Գաթեխիզմի, ի հերքումն եւ յարմատաքի խլումն Հերետիկոսացն Աղանդոց՝ յայնժամ՝ նորոց երեւեցելոց։ Որ եւ շարակարգեցին եւ հրամանաւ ծայրագունի Քահանայապետին Հռոմայ Երանելւոյն Փիոսի Հինգերորդի՝ տպագրեցին հրատարակեցաւ։ Եւ արդ ոչ յետ մեծի միջակութեան ժամի․ ածանցեցաւ ի լեզուս զնզնոց Եւրոպացւոց Ազանց ի դէտս եւ կացութիւն իւրաքանչիւրոյ ազգի․ առ ի հմտացումն սկզբանց Կաթուղիկէի Հաւատոյ․ եւ զգուշացումն ի Թունաւորից Հերետիկոսաց գրեանց մեծաւ պտղով ոգեւորականաց։ Զոր առեալ իմ․ շարժեցայ ի նախանձ մի․ եւ թարգմանեցի ի Հայերենական բարբառ մեր․ այդ զի եւ Արամեանս Եկեղեցի վայելեսցէ զՄատեանս զայս այնքանեայ վարկենի․ եւ նպաստեսցէ ի վաճառաւէտ վարդապետութեան վճռի Հաւատոյ Առաքելականի։ Արդ՝ Գերյարգելիք եւ Պատուելիք Հարք եւ Հովիւք խաշանցն Քոյ, բարեմտաբար ընկալջիք

digitised by A.R.A.R.@

զօրութիւն իմ՝ պայծառ զօր նուիրեմ՝ ձեզ մեծարանս սիրով, ոչ իբր զի եւ ինչ Գիրք. այլ զԳրքարան ինն Լիակատար Մատենից որոց վարդապետաց, գրեթէ անբաւից Յունաց եւ Լատինացւոց եկեղեցականաց եւ ամենագիտնական գրելոց համառօտ։ Որ ձեզ միայն առօրինակունից Առաքելական Գրքոց. այլեւ ի՝ նոցա քննեց՝ զհոգաբարձութիւն ժողովրդեան ունողաց եւ վարդապետաց բանին ԱՅ Քարոզչաց եւ վերակացուաց նոցին Եպիսկոպոսաց, զամենայն ընծայէ նիւթ, թէ հրահանգելոյ զինքեանս յայնս, որք պահանջին ի կացութեն իւրեանց Գղերիկոսական. եւ թէ մարզելոյ եւ ուսուցանելոյ զՀաւատացեալ ժողովուրդն ի սէր Հաւատոյ կաթուղիկէ եւ ի պահպանութեն Պատուիրանաց Աստուծոյ. զի Քրիստոնէաբար կեցցեն եւ կրօնաւորապէս մեռանիցին ի Տէր. Այն զի մանրամասնել, նաեւ եւ հակիրճ մեկնաբանել զՕղուածս բժ. անս Հանգանակին Հաւատոյ. զՏօթնեակս խորհուրդս Եկեղեցւոյ. զՏասնաբանեան Պատգամն Աստուծոյ եւ զԱղօթն Տէրունական. Բայց յորդորեմ զվերայիշատակեալս զի յանախակի ընթերցմամբ ստացուսցէք զվարդապետութիւն սորին ի միտ եւ յիշողութեն ձեր, առ ի հեշտակի եւ թարց որոնման այլոց Գրեանց. եւ ձեզ օժանդակել եւ այլոց մատակարարել մաքրագոյն եւ վերջնական ճշգրիտ ուսումնական պլանաւորելոյ զկեանս յաւիտենականն։ կեցջիք ի Տէր»։

Էջ 1. Գաթեխիզմի Հռոմէականի առաջաբանութեն։ Որ ընծայէ յղջն Հովուաց յԵկեղեցւոջ հարկաւորութեն. Հեղինակութեն, Պաշտաման եւ մանաւանդ կանոնականաց վերապահութեն Քրիստոնէականի Գրոց։

Էջ 9. Մասն առաջին. Գաթեխիզմի Հռոմէականի. Մասն առաջին Յղգս Հաւատոյ եւ Հանգանակին Հաւատոյ։

Էջ 11. Յաղագս առաջնոյ հանգանակին օգուածոյ։

Էջ 22. Յաղագս երկրորդի օգուածոյն։

Էջ 29. Յաղագս օգուածոյն երրորդի։

Էջ 35. Յաղագս չորրորդի հանգանակին օգուածոյն։

Էջ 48. Յաղագս հինգերորդի հանգանակին օգուածոյն, եւ այլն։

Էջ 97. Գաթեխիզմի Հռոմէականի մասն երկրորդ. յաղագս խորհրդոց սուրբ Եկեղեցւոյ

Էջ 112. Յաղագս Մկրտութեան խորհրդոյ։

Էջ 140. Յաղագս Հաստատութեան խորհրդոյ։

Էջ 150. Յաղագս Եւխարիստի խորհրդոյն։

Էջ 186. Յաղագս Ապաշխարութեան խորհրդոյ։

Էջ 222. Յաղագս վերջնոյ օծման խորհրդոյ։

Էջ 245. Յաղագս խորհրդոյ ամուսնութեն.

Էջ 258. Քաթեխիզմին Հռոմէականի մասն երրորդ. — յղգս Տէրալօսի, այն է Պատուիրանաց եւ Աստուծոյ օրինաց։

Էջ 264. Յղգս առաջնոյ պատուիրանին։ — խնդիր ԻԲ.

Էջ 275. Յղգս երկրորդի պատուիրանին։ — խնդիր Լ.

Էջ 285. Յղգս երրորդի պատուիրանին։ — խնդիր ԻԸ.

Էջ 296. Յղգս չորրորդի պատուիրանին։ — խնդիր ԻԱ.

Էջ 305. Յղգս հինգերորդի պատուիրանին։ — խնդիր ԻԵ.

Էջ 315. Յղգս վեցերորդի պատուիրանին։ — խնդիր ԺԳ.

Էջ 321. Յղգս. եօթներորդի պատուիրանին. — խնդիր ԻԷ.

Էջ 331. Յղգս. ութերորդի պատուիրանին։ — խնդիր ԻԳ.

Էջ 341. Յղգս. իններ եւ տասներորդի պատուիրանին։ խնդիր. ԻԳ.

Էջ 360. Քաթեխիզմին Հռոմէականի մասն չորրորդ. յղգս աղօթի եւ նորին նախապէսաբար հարկաւորութե։

Էջ 368 յղգս. յառաջաբանութե Աղօթին տէրունականի։

Էջ 440. Աւարտ։

Նոր թուանշան, Էջ 1։ Երկսիւն գրութիւն 27 X 7։ «Յուցակ ուսուցանաց կիւրակէից. ի ձեռն բարեպաշտից Աստուծոյ Բանին Քարոզչաց դիւրագոյնիւ կարգաւ համահաւաքեալ. որով տպագրեցանի. որ առաւելութե այսր Գաթեխիզմի առ որ մասն իւրաքանչիւր Աւետարանի յարաբերել եւ յարմարել կարասցէ. յորմէ զՔարոզս զարդարել եւ ճոխացուցանել մարթասցեն, ոչ միայն նք այլ եւ համայնք որոց ի խաղաղացուցանել զհոգւս մարդկան, բարեկարգել զկեանս եւ զհոգին մարդկան որոյ Քրի, զժողովուրդն յորդորել եւ արածել զամենայն խաշին արեամբ է. որպիսիք են հոգաբարձական քահանայք եւ որք զարածումն հոգւոց. բաց իշխանութե քահանայականի վերընկալեալք են։ Նաեւ ոչ ինն գրեթէ լինիցի՛ Աւետարան Տօնի ուրուք հանդիսաւորի, որում զամենայն քարոզելոյ նիւթ ոչ ընծայեսցէ կամ բաց առաւելութե բեմբասացականի լիակատար եւ ճոխաբան կամ Սխոլաստիկանի համառօտ, խորիմաց եւ ներքնագէտ, մինչդեռ բաւականաբար իւրաքանչիւր ուրուք զհոգին ընդել մարթասցէ»։

# 6.

## ԳԻՐՔ ՆՆՋԵՑԵԼՈՑ

## ՀԱՑԿԱԿԱՆ ԴԱՐԱՆ Դ. — ԹԻՒ Թ. ՏԱՐԻ ?

*ՄԵԾՈՒԹԻՒՆ 28X20: — ԿԱԶՄ, կաշեկազմ, նոր: — ԹՈՒՂԹ, ալինք անողորկ: — ԳԻՐ, հասարակ նոտր գիր: — ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. «Անուններ մեռած աղբրտաց ու քրուըտաց եղբայրութեան ամենասուրբ երրորդութեան կըստրոճկորաց: Որոնց համար այս սուրբ Գվարդալի Պատարագս կի կատարվի: Ասոնք են: — Ամէնքը այր ասին իմ եռեւանց Աստուած ողորմի հոգուն»*

Ու կը յաջորդեն ննջեցելոց անուններըը. որ են.՝

1. «Ամենապատիւ Տէր Օգոստոս եպիսկոպոսն Ալամբոյ եւ առաջնորդն մեր։ 2. Տէր Ղազար Պուտախեանն, ու դեռ 16 քահանայ. եւ 710 աշխարհական էրիկ ու կնիկ. Ասոնք էին, ինչպէս կ'երեւայ այն միջոցին (ԺԸ. դարուն մէջ) Վերլայի սուրբ Երրորդութեան եղբայրութեանն անդամները. — Այսկից ետքը կու գայ, ահագին չգրուած պարապ թուղթ։

# 7.

## ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ 1713

## ՀԱՑԿԱԿԱՆ ԴԱՐԱՆ Դ. ԹԻՒ Ժ. 1713։

« *ՄԵԾՈՒԹԻՒՆ 28X21: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն 26X8½ — ՏՈՂՔ 29—35: — ԿԱԶՄ, փայտակազմ՝*

digitised by A.R.A.R.@

կաշեպատ, պղնձի քանակիով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ, բաւական լաւ ու մաքուր: — ԳԻՐ, նոտր գիր, մաքուր, զանազան ձեռքէ ու զանազան ժամանակի մէջ գրուած: — ՏԵՂ գրութեան, Հռոմ, "Ի վանքն հայոց ընդ հովանեաւ Ս. Մարեմայ եգիպտացւոյն": — ԳԼԽԱՒՈՐ ԳՐԻՉ. Տէր Յարութիւն Զօփլի: Լուսանցազարդ. ոսկեզօծ գծեր — բաց ասկէ՝ Աստուածաշունչէն վկայութիւններ: — ՏՈՂԵԿՈՒԹԻՒՆ՝ էջ 36: — ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ էջ 467:

Մ՝ատեանս է. Սպասաւորութիւն սրբոյ պատարագի. բայց ինչպէս, չէ թէ մէկ հատը քանի մը գրքէ կը բաղկանայ:

Առաջին մասը՝ չորս թուղթ է: Երկսիւն գրութիւն 24×7½ — Տող՝ 38: Առաջին թուղթը՝ պարապ՝ վերեւը այս խօսքերը կան. Deus meus et Omnia.

Էջ 1. "Աղօթք զանազան. որք ասել կարեն զկնի որ Ա̃ եւ ի նոյ. վի փափի. — կայսեր — վի ժողովոյ — ի ժամի սովու — ի հայցել զանձրեւ — ի խնդրել զպարզութի — ի մերժել զմրրիկս ի — ժամանակի առաւօտց — վի անձին խնդրեան քհ̃յի — վի հայցման արտասուաց — վի փորձելոց եւ նեղելոց — վի մերժելոյ զչար մտածմունս — վի հայցելոյ զժուժկալութի — ի հայցել զխոնարհութի — ի հայցել զհամբերութի — ի հայցել զսէր: — Վ՝ն ընծայանդ բարեկամաց — վի բանտարկելոց կամ գերելոց — վի փրկութեան կենդանեաց — վի կենդանեաց եւ մեռելոց: — Յաւուր մահուան կամ թաղման մեռելոյն — յ3ում, յ7ում, յ30ում աւուր թաղման — ի տարեկից ննջեցելոյ — ի յոլովս օրական պատարագս ննջեցելոց: — Վ՝ն մեռե̃լ եպիսկոպոսի — վի մեռե̃լ եղբարց, ազգականաց եւ բարերարաց. — վի մեռե̃լ քհ̃յի. վի միոյ այր մարդոյ մեռելոյ — վի միոյ կնոջ կամ աղջկան մեռելոյ — վի հօր եւ մօր քհ̃յին — վի այնոցիկ, որ ի գերեզմանատան հանգչին — վի բազում ննջեցելոց:

Էջ 5. պարապ թուղթ մը:

Գրքիս երկրորդ մասն է. "Սպասաւորութիւն պատարագի" (տպագրեալ, այս տիտղոսով). Ministerium Missae. — Romae, Typis Sacrae Congregationis de Propaganda fide. MDCLXXVII. Ու կը յաջորդեն նանեւէ նանե մեր գիտցած պատարագամատուցին կարգերը. բայց միայն դպրաց ու սարկաւագաց համար. այս վերնագրով "Խորանք սարկաւագութե եւ դպրութե սպասաւորութե պաշտօնի":

Էջ 27. Գէշ գրով գրուած "Նշանք պահելք փափին ի Պաւղոսյն ընթրեաց Տն. 1. Հերետիկոսունքն, որոց եւ իցեն ազանդոյ. նոցին խնամակալքն: Սոցին գրեանց ընթերցողքն. պահօղքն եւ տպօղքն եւ հերձուածօղքն: 2. Որք բողոքեն ի փափէն առ ապա ժողովն: Ծովու աւազակքն եւ նոցին ընկալօղքն եւ խնամակալքն" եւ այլն:

Մատենիս երրորդ մասը կը սկսի նոր ձեւակատով, մեսրովպեան մեծ կարմրագրով այսպէս "+ Սկսումն | խորհրդատետրիս | ազնիւ | ազի | նոր":

Էջ 30. Խորհրդատետր, յորն ամոյ պիտի ընծայման (այսպէս) մարմնոյ եւ արեան սն մերոյ Յսի. Քսի ընդ հօր վի հաշտութե աշխարհի: Ըստ պատշաճի աւուրն տօնից տէրունականաց եւ բոլոր կիրակէքն ամի. եւ երկուասան ամսոց. այսինքն աստուածամօրութեան հաւատոյ. որ է հրամայեցեալ Տեառ առաքելոց, վեհապետաց, եպիսկոպոսաց, մարտիրոսաց, արդարոց. խոստովանողաց եւ կուսանաց եւ ամ մանաւանդ սրբոց. Նախ ժամամուտք: Երկրորդ. ընթերցմունք: Երրորդ. Մեսեդիկք: Չորրորդ աւետարանք լի եւ անթերի եղեւ գրեցե̃լ: Բայց աղաչանաց յորն արդ եկի գնչանս զայն Հհ. երբեմն գտանի ի մէջ խորհրդատետրիս, կամ այսպէս ☐, որ երբեմն գտանի. եւ եղեալ է այսպէս եւ չորեքին կողմն չեջագրեալ, տեառնօղքն իմացցեն եւ ոչ ընթերցուցեն զայն աղալն. բաւեսցին":

"Իսկ այս եւս յուշ լիցի ընթերցողացդ. խորհրդատետրս այս է երկրորդ հատորս. այսինքն ի զատկական կիրակէէն եւ զկնի Պէնտէկոստէի, կիրակէքն մին հատոր: Իսկ ամսոց տօնից մինչեւ ի վերջն խորհրդատետրին է մին հատոր: Իսկ թիւն, այսպէս իմանաս որ հետեւի: Քանզի եւ զատկական կիւրակէից մինչեւ ի զկնի Պէնտէկոստէի կիրակեից վերջն, ընթերցմանց եւ աւետարանաց թիւքն այսք են, հարիւր երեսուն եւ եօթն գիրք առաջին հատորին, այսինքն Կիրակէից եւ Այլոց տէրունականաց տօնից":

"Բոլոր թղթոյ թիւքն այսք են. ի զատկական կիրակէից մինչեւ ի վերջն քառասներորդաց, կամ կանոն պտղքին եւս ի հետ որ համար թուոյ է, երկու հարիւր երկուս. եւ ցանկ սոցին գիւտ ի վերջ խորհրդատետրին է: Հատորոյ պտղքի ընթերցմունք եւս ի վերջի ցանկի միջում կայ, ըստ որոյման քոյ գիւտ եւ պատարագեաս, եւ գես յիշեա":

"Բայց երկրորդ հատորն, այսինքն ի գեկտեմբեր ամսոյ, որ է սկիզբն հատորին, մինչեւ եղերին ամիսքն երկոտասանք. եւս հասարակք կայ ի վերջի. Թիւք ընթերցմանց գրեից՝ այսոքիկ են երկու հարիւր սառն եւ եօթն. եւս գտանի քանի մի որհնութիւնք իրաց. այսինք ջրոյ. մոմի. եւ հրոյ եւ այլն: Բայց թիւք թղթոց, այսոքիկ են երկու հարիւր սառն ի յարութե կիրակէի մինչեւ ի վերջ խորհրդատետրիս. եւ ցանկ սորին սկիզբն խորհրդատետրիս է հանդերձ անուանցուցիւ, ըստ որոյման քմ" (չարաւնակութիւնը՝ կորուած, զաւրահանուած է:

Էջ 31. Կը յաջորդէ, կրկնագոյն աշխատակաւոր "տօնացոյց հաւաքացելոց" վերջ թուղթ՝ մինչեւ 43. — "վերագիրս այս ժե. հայեալս միայն ի կեր անկանի յամին յայնմիկ, որում պատահանէ՝ իսկ է թվոյն ժթ. վերջ:

Էջ 45. Յղթն ծննդեան Տն Յսի. — Ուրիշ գիր. "Յղթն խորհրդատետրի պատարագի ըստ աւուրց ժամի պատշաճիւ: Առաջին կիրակէի վի զատկական Տն:

Էջ 63. Ծննդեան Տն մերոյ Յսի Քսի: Առաջին ... ի մէջ գիշերի:

Էջ 151. Ծաղկազարդի կիւրակէի պատարագին մէջ առնուած է, լատինացւոց սովորական չարչարանաց աւետարանը — նոյնպէս աւագ երեքշաբթի օրը. ուր որ աւետարանին այն տեղն ուր որ կ'ըսուի թէ. Եհան զոգի — լուսանցքին վրայ սա ծանօթութիւնը կայ "Բայց արդ պարտին խոնարհել ի ծունկս, ասկաւ ինչ մնացրութեամբ": Ու քիչ մը վար, ուր որ այն խօսքը կայ թէ. Եւ այլք բազումք կանայք. որ ընդ նմա եկեալ էին յԵրուսաղէմ, այս ծանօթութիւնը

digitised by A.R.A.R.@

կայ «Առ եւս պարտիս գնալ փութալի սիրոյ սեղանոյ, առկաւ ինչ մտածել»։

Էջ 3'3. «Ի՛ն սրբյն Գրիգորի Լուսաւորչին ելն ի վիրապէն եւ գիւտ նշխարաց։ «Ա՛ծ, որ շնորհեցեր սրբյն Գրիգորի լինել լոյս եկեղեցւոյ. վկայ ճշմարտութե՛, հայրապետ հայաստանեայց. քահանայ սիրոյ եւ քարոզող շնորհին, որ այսօր ելանելով սորա ի վիրապէն լուսաւորե՛լ եղեւ աշխարհն հայաստանեայց. աղաչեմք զքեզ տէր. զի սորին բարեխօսութեամբ շնորհեսցես մեզ ի խաւարէն մեղաց մերոց ելանել եւ ընթանալ առ լոյսն պատուիրանի քոյ. ի ձեռն»... եւ այլն։

Էջ 219. Օրինակ արկանելոյ օրհնութեան եկեղեցւոյ. յորժամ կամիցի... Քրի՛ստ քոյ զգեցցին... եւ քհ՛յն ասասցէ զաղօթս. Որ զգեցեալ ես... եւ յետ զգենլոյ սպիտակ զգեստուցն. ասասցեն սաղմոս. Լուացից նրութեամբ զձեռս։ Քարոզ ՍՏ զմեծամէծն եւ զմեծ... Աղօթք. ընկալ տէր զաղաչանս. եւ ապա խնկարկեալ եւ այլն. ասէ խոստովանիմ...

Էջ 223. Կը սկսի Նոր Ճաշոց մը սա (տպագրեալ) վերնագրով. «Խորհրդատետր պատարագին հայոց Lyturgia armena. Roma. MDCLXXVII.

Էջ 289. Ի նը ի նըէն Յու՛ղ «Նայեաց տէր մեր յն քն... եւ ի ձեռս մեր ամենայն ժողովրդեանս. եւ զայս ասասցէ՛լ երկրպագեսցէ եւ համբուրեսցէ զսեղանն. եւ առէ՛լ զնը մարմինն սրբ՛ թողցէ յանապականն արեանն եւ ասասցէ Տէր մեծ մեր. որ կոչեցեր զմեզ.... քն պատարագե՛լ... մինչ նը երգեսցեն, քհնյ առցէ զմարմինն ի ձեռն եւ համբուրեսցէ արտասուօք ասելով զայս. Զոր օրհնութիւն կամ զոր գոհութի՛... եւ բեկե՛լ արկցէ ի բաժակն արեանն ասելով. Կատարումն Ոգւոյն սրբոյ։ Եւ ապա առե՛լ զմի մասն ի ձեռն իւր ասասցէ ի ծածուկ արտասուօք եւ գոհութե՛ առ հայր. Հայր սբ՛ որ անուանեցեր զմեզ». եւ այլն

Էջ 245. Վ՛ն յարութե՛ Տն Յ՛ի։

Էջ 258. Օտար ու գէշ գրով գրուած. «Մեռելոց եւ տօնաւոր յգն հոգեգալստեան. ի առելն եկն ոգի նը եւ այլն. ծունր կրկնեա եւ զայս մաղթք եկ ոգի նը, հանգերձ տօնաւորօքս եօթն որ պարգէ զկնի ընթերցման գրգին ասել. այսինքն փոխանակ հոգի քոյ բարի առաջնորդեսցէ. ասիցէ եկ ոգի նը. եւ այլն։ Եւ եղանիլն նը անմիջապէս հետեւի տօնաւորին։ Առաջին ծունր կրկնելի է։ Եկ ոգի նը եւ լից զսիրտս քոյոց հաւատացելոց եւ հրով սիրոյ քոյ բորբոքեա զսիրտս նոցին։ Եկ նորոգող նը հոգի | եւ առաքեա յերկնաւոր անտի | զլոյս քոյ ճառագայթիւ։ | Եկ խնամածու աղքատաց | եկ ընձեռօղ պարգեւաց | եկ լուսատուող սրտից մերոց | Մխիթարիչդ բարեգոյն | հոգւոց մերոց հիւր քաղցրագոյն եւ զովացումն համեղագոյն | ի յաշխատութիւնս հանգստութի | եւ ի տագնապս հովանութի | իսկ եւ ի յողբս սփոփութի |։ Ով երանե՛լ լոյս երկնայնոց | լից զներքինս սրտից հոգւոց | հաւատարմաց բնաւից քոյոց։ | Առանց նպաստութեանց քոց | չիք ինչ ի մարդն անեղծութեան | չիք ինչ անմեղ մարդկան հոգւոց |։ Զաղտեղութի մեր սրբեա | ի ցամաքելս զշնորհս քո ցօղեա | զհիւանդութիւնս ապաքինեա |։ Մեղկեա զկամս կարծրագոյնս | ջեռեա զսիրտս ցրտագոյնս | ուղղեա զգնացս թիւրագոյնս |։ Տուր քոյոց հաւատացելոց | ի քեզ ապաւինելոց | եօթնեակ պարգեւս շնորհաց քոց։ | Շնորհեա զարդիւնս զօրութե | եւ տուր զելս մեզ կեցութե. | տուր ինձ զլումն խնդութե Ամէն։ —

Էջ 261. Վ՛ն համբարձման Տն։

Էջ 264. Պէնտէկոստէի յաւուր։

Էջ 281. Հանգստաւորութե մարմնոյ Ք՛ի։

Էջ 319. Պօ՛րգ ամենայնում ամսոյ ըստ պատշաճի աւուր։

Էջ 436. Յղջն. հասարակաց սրբց տօնից պօ՛րգ

Էջ 460. Յանկ յաղագս գալստեան Տն. մն կիրակէից։

Էջ 461. Յանկ քառասներդաց։

Էջ 462. Յանկ մն յարութե Տն։

Էջ 463. Յանկ պէնտէկոստէից։

Էջ 465. Յանկ ժամամուտի։

Էջ 467. Փառք եւ գոհութի եւ երկրպագութի կենդանատուութեան մերոյ Յսի. որ ետ զկարողութի նուաստացելոյ աշխատաւորին հասանել եւ վախճան խորհրդատետրիս. եւ շնորհակալութի Ամենեբանեցելոյ կուսին մարիամու, որ իւրով մայրականաւ զթութեամբ պահեաց ամբողջս. զոր աւարտե՛լ կատարեցի յամի Տն հազար եօթն հարիւր եւ երեքտասանի. եւ յամսեանն փետրվարի քսանի։ Իսկ ըստ հայոց հազար հարիւր եւ վաթսուն եւ երկուս յամսեան փետրվարի ինն։

Ի մեծ Մայրաքաղաքն Հռոմ ի վանքն հայոց ընդ հովանեաւ Սրբուհւոյն Մարիամու եգիպտացւոյն ի վեհապետութե եկեղեցւոյն քո՛ի Սրբազան Կղեմէսի մետասաներորդի. եւ աշխատասիրութեամբ ամենայն չնչին կրօնաւոր քհ՛յի վերծանեցե՛լ մակատրութեամբ չօփի տէր յարութե սրմաւորենեան եւդոկիացւոյ։

Արդ հանդիպողք սրբն եւ պատարագօղք. եւ զեռ յիշօղք լինիջիք եւ գուք յիշե՛լք ի քնէ. Եւ նմա փառք յաւիտեանս. Ամէն։ Լրումն։

Էջ 469. պարապ թուղթ։

Էջ 471. Բոլորովին օտար գրով. «Օրինակ տօնացուցին ըստ հայոց ուղղափառաց ի երկիրն լեհաց»։

— Կը յիշուի քանի մը տէրունական տօն։ Այսպէս ի մէջ այլոց. «Դեկտ. Թ. Տօն է անարատ յղութե ՍՏ Ածածնին։ Տօնախմբի ամեն այս ութն օր. զնի սրբութե ի բեմն. որ առի Լաթիներէն խնմագուլեադա գոնձեբձիօ Պէադիսիմէ մարիէ վիրճինիս։ Բայց աշխարհական այս տօնը յատուկ ունիր. եթէ կամիս, դու զայդ առա կամ զերդեցէքն կամ ուրիշ։ — Դեկտ. ժդ. անխափան կատարի եւ լինի բարեկենդանք Ք՛ի Ա՛Յ մերոյ։ Եւ եթէ հանդիպի գշթի, դու գշթի արայ. կամ թէ ուրբաթ. դու եշթի արայ։ Բայց գիտելի է զի ճրագալոյցն ոչ լուծանի արդարեւզով, այլ ձուկն զէգինեզով։ Պարտ չէ ճերմակ ուտիս ուտել, այլ Պասս խթման օրն»։

«Արդ այժմ ընձեռեցի առա միայն զտօնս սմանս ի սրբազրեցե՛լ տօնացոյցէն։ Եւ առա ամ հանգիստ որ Տանից լինի քարոզ եւ թափօր մեծամեծօք եւ խնկօք ի բակն եկեղեցւոյն. եւ շաբաթ օրերն պաս կուսին տօն. ու զատիկ ճերմակ ուտիս. եւ միս ոչ ուտեն. վն զի այս է նշանն ուղղափառ հաւատոյ։ Ամէն մեծ տօնի կի խոստովանին ու կի հաղորդուին մեծ ու պզտիկ։ Բայց ժամասացութի կառվի ըստ սովորութե. միայն եղանակն շարականին ու այլ երգերուն լատինավար կի երգեն։ Պատարագն ճշմարիտ է, որ ըստ կանոնադրութեան եւ դաւանութե ուղղափառաց. եւ այլ ամէն ինչ ճշմարիտ է եւ արդար է»։

(Շարունակելի։) Ա. Բ.



digitised by A.R.A.R.@